

Խաչատուր Թահմազ

ՊՈՆՏԱՀԱՅԵՐԻ ԲԱՐԲԱՌԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՋԵՆԻՉԻ ԵՆԹԱԲԱՐԲԱՌ (Համառոտ):

ՆԱԽԱԲԱՆ

Սեվ ծովի հարավ-արևելյան ափերում (թուրքական Սամսուն քաղաքից մինչև վրացական Բաթում) և հարակից լեռնային գյուղերում ապրող հայերի, ինչպես նաև Մեծ եղեռնից փրկված և Աբխազիայում ու Ռուսաստանում բնակություն հաստատած հայերի սերունդների բարբառը ուսումնասիրվել է բազմաթիվ հետազոտողների կողմից, որոնցից ամենաձավալունը և արժեքավորը, Հ. Աճառյանի «Քննություն համշենի բարբառի» աշխատությունն է: Իր իսկ, Հ. Աճառյանի, խոստովանությամբ, բարբառի քննությունը կատարել է 1910 թ. Թրաբզոն քաղաքի և հարակից շրջանների գյուղերում, և 1946 թ. Աբխազիայում, կատարած հետազոտությունների հիման վրա: Չգիտես ինչու, մեծն Աճառյանը, այդ հսկայական երկրամասում ապրող հայերին անվանել է «համշենահայեր», Թրաբզոնի շրջանում գտնվող Համշենի (հնում նույնանուն իշխաթություն Համշեն կենտրոնով) անունով, իսկ հայերին՝ «համշենահայեր», այնինչ, մինչև օրս էլ, պոնտահայերը իրենք իրենց բաժանում են թրաբզոնցիների՝ Թրաբզոնի շրջանի և ջենիգցիների՝ Ջենիգ (թուրք. Ջանիկ) գավառի անունով: Բնարկե, ինչպես նկատել է մեծն Աճառյանը, բարբառը մեկն է, և բաժանել է երկու խոսվածքի, այլ ոչ թե երկու ենթաբարբառի՝ իրենց խոսվածքներով: Երեվի, ինչպես գրել է նա, ձեռքի տակ եղած նյութերի պակասության պատճառով:

Կարող է հարց ծագել, թե այդ ինչպե՞ս է, որ իրարից հարյուրավոր կիլոմետրեր հեռու գտնվող հայերը, կտրված միատար թուրքական բնակավայրերով խոսել են նույն բարբառով: Կան բազմաթիվ ապացույցներ և վկայություններ, որ հնում նրանք միացյալ են եղել և խոսել են նույն բարբառով, որը չի ունեցել ենթաբարբառներ: Սեվծովյան այդ Հայկական երկրամասը, բյուզանդական ժամանակաշրջանում կոչվել է «Արմենիկոն», որը կիսվել է թուրքերի կողմից՝ երկրամասի հայ տարրի ուժը ջլատելու համար, որից հետո յուրաքանչյուր մասի պոնտահայերի լեզուն զարգացել է ինքնուրույն՝ պահպանելով հիմքը: Ինչպես օրինակ, արեվելա- և արեվմտահայերեն գրական լեզուները:

Ջենիգ գավառը զբաղեցնում է Օրդու և Սամսուն քաղաքների միջև ընկած ծովափի ամբողջ լայնքով, մինչև Արաբիս լեռնաշղթայի լեռնագագաթները ընկած տարածքը, սահմանափակվելով Ջենիգի լեռնաշղթայով: Այստեղ հայերը բնակություն են հաստատել հազարամյակներ առաջ: Այդ մասին է վկայում Օրդու քաղաքի, ջենիգցական Էրդի(ր) անունը, այսինքն՝ Էրերի դրած, հիմնած, ինչպես Էրեբունիի՝ Էրերի տան, պարագայում:

«Ջենիգ» տեղանունը կազմված է «ջեն» արմատից և «-նիգ» հոգնակերտից և վերծանվում է «ջեներ»: «Ջեն» արմատը արիական շրջանի բառ է, որը պահպանվել է նույնությամբ իտալերենում, պարսկերենում՝ «ժեն», և նշանակում է «զեն»: Այդ նույն արմատով է կազմվել նաև իտալական Ջենովա՝ ջեներ, քաղաքի անունը: (Տե՛ս «Амшен – Понто» выпуск 4, 2011г.):

Վերադառնանք պոնտահայերենի ջենիգի ենթաբարբառին:

Նախ այն մասին, որ Ջենիգի գյուղական բնակավայրերը ունեցել են առեվտրական և մշակութային առավել սերտ կապեր ծովափի վեց Օրդու, Սամսուն, Չարշամբա, Թերմե, Ունյե և Ֆատսա քաղաքներից որևէ մեկի հետ: Գյուղացին, հայրենի գյուղի անունը ասելուց հետո, ավելացնում էր. «միր բազարը Ֆատսարն էր», կամ մի այլ քաղաք: Իսկ քաղաքացի ջենիգցիները, ունեցել են ավելի մեծ հնարավորություններ կրթվելու և գրական հայերենի հետ շփվելու, ուստի ժամանակի ընթացքում նրանց լեզուն հղկվել և մոտեցել է գրականին: Այդ երեւույթը առավել ցայտուն է Օրդուի՝ Ջենիգի ամենամեծ քաղաքի, խոսվածքի պարագայում:

Ներկայացնելով ընթերցողի դատին Պոնտահայերենի Ջենիգի ենթաբարբառի՝ իմ մայրենիի, համառոտ քննությունը և բառարանը, ցանկացել եմ ի կատար ածել մեծն Հ. Աճառյանի կտակը՝ «ջենիգի խոսվածքը կարիք ունի լրացուցիչ ուսումնասիրությունների»:

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Պոնտահայերեն բարբառի Ջենիգի ենթաբարբառում, ինչպես և գրական հայերենում, բառերը լինում են պարզ՝ արմատական, և ածանցավոր:

Ածանցավոր բառերը կազմվում են ինչպես նախածանցով, այնպես էլ վերջածանցով:

Ջենիգի ենթաբարբառի բառերը լինում են պարզ՝ բաղկացած մեկ արմատից, և բարդ՝ մեկից ավելի արմատներից:

ՎԵՐՋԱՂԱՆՑՆԵՐ

Ջենիգի ենթաբարբառի առավել տարածված վերջածանցներն են.

«-ադ» – գիսադ (կիսատ), «-ագոն» – օրագոն (օրական), «-եդ» – ուժեդ, «-եդեն» – օսկեդեն (ոսկեդեն), «-ընի» – թըզընի (թզենի), «- պար» – ընգերապար (ընկերաբար), «-իզ» փիսիզ (փիսիկ), «-իճ» - երկիճ (երգիչ), «-կեդ» - վախկեդ (վախկոտ), «-եդ» – ադդեդ (կեղտոտ), «-ա» - երզրաա (երկաթյա), «-յագ» - դասնյագ (տասնյակ), «-բես» - իսկաբես (իսկապես), «- եծ» - մադնեծ (մատնոց), «-ուտին» - ընգերուտին (ընկերություն), «- ուզ» - լըդվուզ (սահուն):

ՄԱԿԲԱՅՆԵՐ

Մակբայները պատասխանում են հետևյալ հարցերին.

Ե՛ պ (ե՛ քք), վո՛ յդէխ (ո՛ րտեդ), ինձձո՛ (ինչպե՛ս), և լինում են ստորոգյալի կամ բայական անդամի լրացում:

Մակբայների տեսակներն են.

ա) Տեղ ցույց տվող.

Ըմըն դեդ (ամեն տեղ), դեդ-դեդ (տեղ-տեղ), բադնիվիբ (պատնիվեր), ծեյնիվաբ (ձորնիվար), տեմ –տիմած (դեմ առ դեմ), և այլն:

բ) Ժամանակ ցույց տվող.

Հիմի (հիմա), դարեծդարի (տարեցտարի), օրեծօր (օրեցօր), մեզ-մեզ (մեկ-մեկ), դրհա (դեռ), աատիետկը (այսուհետեվ), Էկուծ (վաղը, էգուց), առած (նախ), ետկըն (հետո), բազի-բազի (ծամանակ առ ծամանակ), վախտին (ծամանակին), աավաղը (վաղուց), և այլն:

գ) Քանակ և աստիճան ցույց տվող.

Քոնի բոյ (քանիցս), շադ (շատ), շադ-շադ (բազմիցս), չապըն տուս (չապագանց), քիճմը (մի քիչ, մի փոքր), քիճիզմը (մի քիչ), ավելի (ավելի), աավելի (էլ ավելի, ավելի ևս), ջիբ (բոլորովին), մեզ-մեզ (մեկիկ-մեկիկ), քիճ (քիչ), քիճ-քիճ (քիչ-քիչ), և այլն:

դ) Ձեվ ցույց տվող.

Նորըն (նորից), մեճումեճ (մեջ ընդ մեջ), ախապաբապար (եղբայրաբար), գոմած-գոմած (կամաց-կամաց), ուժեդմը (ուժգին), հետկըջի (իսկույն), դաիմա (շարունակ), մեճաբես (մեծապես), փոխեփոխ (փոխեփոխ), էրեվնոդ (սկնհայտ), նորըն (նորից), և այլն:

Մակբայները չեն հոլովվում:

Մակբայակերտ վերջածանցներ.

«-պար» – ընգերապար (ընկերաբար), «-բես» – մեճաբես (մեծապես), և այլն:

Կրկնավոր ածանցներից և գոյականներից նույնպես կազմվում են մակբայներ.

Գոմած-գոմած (կամաց-կամաց), հայար-հայար (արագ-արագ), ուշ-ուշ (ուշ-ուշ), թեզ-թեզ (շուտ-շուտ), բադ-բադ (սառը-սառը), դակ-դակ (տաք-տաք), էրես-էրեսի (էրես-էրեսի), և այլն:

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

Ջենիգի ենթաբարբառի եղանակավորող բառերը, ինչպես և գրական հայերենում, ցույց են տալիս խոսողի մոտեցման եղանակը նախատասույթյան արտահայտած մտքի հետ.

Կոնե (գոնե). Ես ծիրը կալ չիմզայնի, կոնե տուն հայդի միրը:

Ես չեմ կարող ձեր տուն գալ, գոնե դու արի մեր տուն:

Չա (չե, ոչ). Միյ դունը էգո՞ղ իս (ըս) տա: - Չա՛:

Մեր տուն գալո՞ւ ես: - Ոչ՛ (չե՛):

Հա (հա, այո). Միյ դունը կո՞ւմ տա: - Հա՛:

Ձեր տուն գա՞մ: - Այո՛ (հա՛):

Ասիս (ասես). Ասիս տա դակ ա՛ դակ չա, ամա ...

Ասես տաք է՛ տաք չի, բայց ...

Ինձընա էդեվ (ինչորե). Ինձընա էդեվ՝ ես էգա: Ինչորե՛ ես եկա:

Կիդիս (կարծես). Կիդիս, տա մաշտ ա, ամա ...

Կարծես, թե մարդ է, բայց ...

Հալբա (իհարկե). Կուկա՞ս տա: - Հա՛ լրաա: Կգա ա: - Իհա՛րկե:

ԿԱՊ

Կապերը գործ են անվում գոյականի, դերանվան կամ գոյականաբար գործածվող բառերի հետ նրանցից առաջ կամ հետո, և նախադասության ստորոգյալին կապում են նրա լրացմանը, ցույց տալով լրացման պաշտոնը:

Կապերի տեսակները.

ա) Նախադրություններ.

Ըռոնծ (առանց), մինձեվ (մինչեվ), կոյա (իբրեվ), դրհա (դեռեվս):

բ) Ետադրություններ.

Չակըն (առանց), հոմար (համար), դայրը (բացի), ինտուս (դեպի այն կողմ), իստուս (դեպի այս կողմ), ի վիբ (ի վեր), ի վաբ (ի վար, ներքեվ), հեդ (հետ), վըրըն (վրա), դագ (տակ),

մեճ (մեջ), տուս (դուրս), ետկը, էրեվ (հետո), բես (պես, նման), չասպ (չափ), մեճ (մեջ), և այլն:

ՇԱՂԿԱՊՆԵՐ

Ջենիգի ենթաբարբառի շաղկապները լինում են.

ա) Համադասական՝ կապում են համազոր բառերն ու նախադասությունները. Ու (ու), գամ (կամ), ամա (բայց), և այլն:

բ) Ստորադասական՝ կապում են մեկը մյուսին լրացնող նախադասությունները. Օր (որ), տա (թե), հընոր (որպեսզի), և այլն:

Բարդ շաղկապներ, երկու և ավելի արմատներից կամ բառերից կազմված, չեն հայտնաբերվել:

Բաղադրյալ շաղկապներ, կազմված երկու հարադիր բառերից. Գամ տա (կամ թե), օրի չա (ինչու ոչ), կոյա տա (իբր թե), գոմմոյ տա (քիչ մնա), հաշվա տա (համարյա թե), և այլն:

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ձայնարկությունները արտահայտում են՝ զարմանք, կոչ, հուզմունք, որոնք գործածվում են ինչպես առանձին, այնպես էլ կոչական բառերի հետ:

Լինում են բացականչական և կոչական. Ախ (ախ), հեյ (հեյ), էվախ (հեյ վախ), վախ (վախ), աման (աման), օֆ, էֆ (օֆ), փուֆ (փուֆ), հո (հեյ), էյ (հեյ), յու (դու), օյ (օյ), և այլն:

Օրինակներ.

Ա՛խ, իմ դրոշա: Ա՛խ, իմ բալաս:

Հ՛եյ, վե՛վ իս: Հե՛յ, ո՛վ էս:

Սուսան, յ՛ու: Սուսան, դո՛ւ: (- է՛յ՝

այո՛):

ՀՆՉՑՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ջենիգի ենթաբարբառի ներսում՝ գրական – բարբառ, հոլովման, խոնարհման և այլ դեպքերում, տեղի են ունենում հնչյունափոխություններ (անցումներ). ր – յ, ր – շ, ո – ե, ա – օ, և այլն:

Բ - Յ անցումներ

Ուղղական հոլովի եզակի թվում.

Արծաթ՝ այձատ, արջ՝ այճ, փարջ՝ փայճ:

Կրծել՝ գլձուշ, գործել՝ կոյձուշ, կրտել՝ գլղուշ, և այլն:

Եզակի թվի գոյականների հոգնակիացման ժամանակ.

Ընկեր՝ ընգեր – ընգեյնի, ընգեյո՞ւլ:

Քոչվոր՝ քոճվեր – քոճվեյնի:

Եղբայր՝ ախաչքո – ախաչքնի, ախայո՞ւլ, և այլն:

Խոնարհման ժամանակ.

Ազգեր՝ ազգեր – ազգեյս, ազգեյո, ազգերը:

Մեծեր՝ մեճեր – մեճեյս, մեճեյո, մեճերը:

Մեխ՝ մեխ – մեխեյս, մեխեյո, մեխերը, և այլն:

Ո – Ե անցումներ

Լոր՝ լեր (լորեր), շոր՝ շեր (շորեր), խոտ՝ խեղ խողեր), ձոր՝ ձեր (ձորեր), մրոտ՝ մրեղ (-նի), և այլն:

Բ – Շ անցումներ

Ուղղական հոլովի եզակի թվում.

Մարդ – մաշտ, բուրդ – պուշտ, քուրդ – քուշտ, խլուրդ – խլուշտ, հորթեր – հոշտեր, մորթել – մոշտուշ, և այլն:

Ա – Օ անցումներ

Անտուն – օնդուն, անտեր – օնդեր, անգույն – օնկուն,

Աման – օմոն, ամիս – օմիս, անուն – օնուն, անալի – օնլի,

Բերան – պերոն, բան – պոն, բանալ – պոնուշ,

Նշան – նշոն, դարման – տարմոն, զանգակ – զոնգազ, և այլն:

ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

Բարդ բառեր կազմելու ձևերը

Ջենիգի ենթաբարբառում, ինչպես և գրական հայերենում, բարդ բառի մեջ, սովորաբար, առաջին բաղադրիչը լինում է երկրորդի լրացումը:

Բարդ բառերի բաղադրիչները լինում են ինչպես հոդակապով, այնպես և առանց հոդակապի: «Ա» հոդակապով միացվող բարդ բառերը, ջենիգի ենթաբարբառում, շատ ավելի քիչ են, քան գրական հայերենում: Հաճախ, հոդակապով միացած բարդ բառերը, ջենիգի ենթաբարբառում տրանսվորմացվում են առանձին բառերի, կամ գործածվում են այլ լեզուներից փոխառնված բառեր:

«Ա» հոդակապով միացող բառեր.

Վարժապետ – վառժաբեղ, ամենալավ – ըմբնալավ, գլխացավ – կլխացավ, դասագիրք – տասակիրկ, և այլն:

Անհոտակապ բարդություններ.

Ձնձաղիկ – ծնձաղիզ, դասընկեր – տասընգեր, ականջօղ – օնգօջօղ, կեսգիշեր – գեսկիշեր, հոգեառ – հոկիառ, և այլն:

Տրանսվորմացվող բարդ բառեր.

Ակնաբույժ – աճկի հեկիմ, ամսաթիվ – օմսու թիվ, ամենօրյա – ըմբն օրվոն, կշռաքար – գըշռկի քար, և այլն:

«Ի» ձայնավորով վերջացող որոշ բառերում, վերջինիս հաջորդող «ա» հոդակապի հետ վերածվում է «ե» ձայնավորի: Այդպիսի որոշ գրական բառեր՝ տրանսվորմացվում են առանձին բաղադրիչների, սակայն, ինչպես և գրականում, կան նաեւ «ա» հոդակապով բարդվող բառեր. Ձի (ձիաբեռ) – ՕԻ (ծիապեռ):

Հոգի (հոգեվարք) – հոկի (հոկեվարկ, քեռի (քեռակին) – քեռի (քեռեգին), բարի (բարեկամ) – պարի (պարեգամ), տարի (տարեդարձ) – դարի (դարետառձ), և այլն:

Տրասվորմացվող բարդ բառեր.

Խնոցագործ – խընոծու կոռձ ընող, հավաբուն – հավու պուն, խալեգործ – խալի կոյձող (խալիջի), ռասկեգույն – օսկիի կունի, և այլն:

Անհոդակապ բարդ բառեր, երբ երկրորդ բաղադրիչը սկսվում է ձայնավորով.

Ցախավել – ցախավիլ, մեծաչք – մեծաճկ, չարաչք – չարաճկ, սեվօր – սեվօր, և այլն:

Երբ գրական հայերենում «ու» ձայնավորով վերջացող և բարդ բառերի առաջին բաղադրիչ հանդիսացող բառերում «ու»-ն վերածվում է «վա» - ի, այդպիսի բառերը տրանսվորմացվում են առանձին բաղադրիչների.

Կատու – կատվախեղդ գադու - գադվի խեխտաձ:

Ջադու – ջադվախեղդ՝ ճադու – ճադվի խեխտաձ:

Կկու – կկվաձայն՝ կուկուգ – կուկուգի ծըն:

Լեգու – լեգվակոթիվ՝ լիգու – լիգվի գըռիվ, և այլն:

Բացառություններ, երբ «ու» վերջավորությունը վերածվում է «ա» հոդակապի.

Հեռու – հեռատես՝ հեռու – հեռադես:

Ինչպես և գրական հայերենում, «ամեն – ըմբն» բառի բարդման ժամանակ, «ա» հոդակապը պահպանվում է, եթե նույնիսկ նրան հաջորդող բաղադրյալը սկսվում է «ա» ձայնավորով.

Ամենաառաջ – ըմբնաառաձ, ամենադքատ – ըմբնաախկադ, ամենակեղտոտ – ըմբնաադդեդ, և այլն:

ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐ

Հարադրական բարդություններ

ա) Շաղկապով.

Մեձ ու բիջիգ – մեծ ու փոքր, դուն ու դեղ – տուն ու տեղ, մաշտ ու գընիգ – մարդ ու կին, և այլն:

բ) Գծիկով.

Էպուշ-թապուշ – եփել-թափել, էշտուշ-էգուշ – գնալ-գալ, դոնուշ-պերուշ – տանել-բերել, և այլն:

գ) Ցանկացած բառի կրկնությամբ, երբ երկրորդ բաղադրյալում սկզբնատառը փոխարինվում է «մ»-ով, կամ ավելացվում է «մ» բաղաձայնը՝ ձայնավորով սկսվող բառերում.

Հած-մած – հաց-մաց, գայջ-մայջ – կարձ-մարձ, ճուր-մուր – ջուր-մուր, ալայ-մալայ – բուր-մուր, և այլն:

դ) Եթե հարադրական բարդության երկրորդ բաղադրիչը փոխում է իր կազմությունը.

Բարաբ-սարաբ – պարապ-սարապ, ձագ-ձուգ – ծակ-ծուկ, շիբ-շիդագ – շիպ-շիտակ, և այլն:

ե) Միեւնույն բառի կամ արնատի կրկնությամբ.

Շադ-շադ – շատ-շատ, քիձ-քիձ – քիչ-քիչ, մեձ-մեձ – մեծ-մեծ, գոմաձ-գոմաձ – կամաց-կամաց, և այլն:

զ) Կցական բարդություններ՝ երբ հարադրական բարդության բաղադրիչները միանում են.

Դունդեղ – տուն ու տեղ, դագվրա – տակ ու վրա, սայծեր – սար ու ձոր, հարմար – հայր ու մայր, և այլն:

է) Հարադրական բարդությունների ներքոհիշյալ ձևեր առավել գործածական է, քան գրականում.

Վայ տըվվուշ – փնովել, էրես դըվուշ – էրես տալ, եղ գոյուշ – հետ կանգնել, յոն դըվուշ – ծլկել, և այլն:

3) Ածանցավոր բարդ բառեր.

Պարեգամ՝ պարեգամուտին – բարեկամ՝ բարեկամություն, ընգերասեր՝ ընգերասիրուտին – ընկերասեր ընկերասիրություն, և այլն:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Գոյականին տրվող հարցեր.

Վե՞ վ – ո՞ վ, ի՞նձ(ը) – ի՞նչ(ը):

Վո՞ւմ – ո՞ւմ, ինձի՞ – ինչի՞:

Վո՞ւմ – ո՞ւմ, ինձի՞ն – ինչի՞ն:

Վո՞ւմ – ո՞ւմ, ի՞նձը ո՞ր ի՞նչը:

Վո՞ւստմա – ո՞ւմից, ինձա – ինչի՞ց,

Վո՞ւստմով – ո՞ւմով, ինձո՞վ – ինչո՞վ:

Ինձի՞ն, ինձին նետը – ինչո՞ւմ, ինչի նետը, և այլն:

Հարցերը տրվում են առկաներին, որոնք ինձում են.

Կոնկրետ՝ մաշտ (մարդ), ուստա (ուստա), վառժաբեդ (ուսուցիչ), դուն (տուն), տուռ (դուռ), գադու (կատու), խեդ (խոտ), և այլն:

Վերացական՝ միուտին (միություն), ընգերուտին (ընկերություն), ժաժում (շարժում), և այլն:

Գոյականի տեսակներ.

Հասարակ անուն. դուն (տուն), տուռ (դուռ), մուզ (մուկ), գադու (կատու), խեդ (խոտ), և ձյլն:

Հատուկ անուն. Կիրկոր (Գրիգոր), Երեւան, Մեւան, և այլն:

Բաղադրյալ անուններ. Մեւանի լիջ (լիճ), Մեւ ձով (ձով), Երեվան քաղակ (քաղաք), և այլն:

Գոյականները ունեն երկու թիվ. Եզակի և հոգնակի:

Հայտնի՝ որոշ, առարկաների վերջում արտասանվում է «ը» կամ «ն», այսինքն նրանք ունեն որոշող հոդեր:

ՀՈԳՆԱԿԵՐՏՆԵՐ

«Վի»

հոգնակերտը օգտագործվում է գույգայնության գաղափարի արտահայտման համար.

Աճկ – աճվի (այք – այքեր), ծեռկ – ծեռվի (ձեռք – ձեռքեր), օտկ – օտվի (ոտք – ոտքեր), օնգոջ – օնգոջվի (ական – ականներ), էրես – էրեսվի (երես – երեսներ), և այլն:

«Նի»

հոգնակերտով հոգնակի բառեր են կազմվում տարբեր ձևվերով: Հոգնակերտը ավելացվում է եզակի բառին՝ վերջից, և եզակին փոփոխություն չի կրում:

Երբ եզակին վերջանում է «ա» կամ «ա» ձայնավորներով, հոգնակիում նրանց փոխարինում է «ու» ձայնավորը.

Ադա – ադընի, ձառա – ձառընի (ծառա – ծառաներ), ալա – ալընի (յալա – յալաներ), և այլն:

Երբ եզակին վերջանում է «ու» ձայնավորով, նրան փոխարինում է «վ» բաղաձայնը.

Մեդու – մեդվնի (մեդու – մեդուներ), գադու – գադվնի (կատու – կատուներ), ջիջու – ջիջվնի (որդ ու որդեր), և այլն:

Երբ եզակին վերջանում է «ր» բաղաձայնով, նրան փոխարինում է «յ» բաղաձայնը.

Ալուր – ալույնի (այուր – այուրներ), թեբուր – թեբույնի (փետուր – փետուրներ), և այլն:

«Եր»

Հոգնակերտով հոգնակիներ են կազմվում բոլոր միավանկ գոյականներից և գոյականաբար ոգտագործվող այլ բառերից, բացառությամբ «ու» և «ի» ձայնավորներով վերջացող բառերի ու մի քանի այլ դեպքերի:

Աձ – աձեր (այծ – այծեր), մալ մալեր (տավար – տավարներ), պոռ – պոռեր (բոռ – բոռեր), ճուր – ճրեր (ջուր ու ջրեր), մուր – մրեր (մուր – մրեր), պուն – պներ (բույն – բույներ), քինստ – քնստեր (քիթ – քթեր), աեզ – խոզեր (խոզ – խոզեր), կեյդ – կոյդեր (գորտ – գորտեր), խեդ – խոդեր (խոտ – խոտեր) և այլն:

«Ներ»

հոգնակերտով հոգնակիներ են կազմվում քիչ քանակությամբ միավանկ գոյականներից.

Պեռ – պեռներ (բեռ – բեռներ), թեռ – թռոներ (թոռ – թռոներ), մուզ – մզներ (մուկ – մկներ), ծուզ – ծզներ (ձուկ – ձկներ), և այլն:

«Կ»

հոգնակերտով հոգնակիներ են կազմվում «ի» ձայնավորով վերջացող գոյականներից և հոգնակիաբար ոգտագործվող այլ բառերից.

Կեղածի – կեղածիկ (գյուղացի – գյուղացիներ), դնեծի – դնեծիկ (տնեցի – տնեցիներ), խալի – խալիկ (խալի – խալիներ), խնամի – խնամիկ (խնամի – խնամիներ), խնածի – խնածիկ (խնացի – խնացիներ), և այլն:

Ջենիզի ենթաբարբառում կան նաև շատ քիչ տարածված այլ հոգնակերտներ.

«վընի»՝ գադու – գադվընի (կատու – կատուներ), ճադու –

ճադվընի (վիուկ – վիուկներ):

«իկ»՝ մաշտ – մաշտիկ (մարդ – մարդիք):

«դիկ»՝ ջոմպա – ջոմպդիկ (ճանապարհ – ճանապարհներ):

«դակ»՝ գնիզ – գընդակ (կին – կանաք):

ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

Գրական հայերենի «ան» և «յան» հոլովումներին պատկանող բառերը՝ պոստահայերենի Ջենիզի ենթաբարբառում բացակայում են:

«ԻՆ» հոլովումը

ընդգրկում է գրական հայերենի «ի», հոլովմանը պատկանող բառերի մի մասը.

Մեռական հոլով (վեվ – ինճ՝ ով – ինչ):

Տրական հոլով (վում – ինճին՝ ում – ինչի):

Օսկ – օսկին (ոդք – ոդքի), կում – կումին (գում – գումի),
Չառ – ձառին (ծառ – ծառի), և այլն:

«ՈւՆ» հոլովումը

ընդգրկում է իր մեջ գրական հայերենի «ի» և «ու» հոլովումներին պատկանող բառերի մի մասը և բոլոր գոյականների և գոյականաբար ոգտագործվող բառերի հոգնակները.

Խեզ – խոզուն (խազ – խոզի), ձով – ձովուն (ծուն – ձովի), գով – գովուն (կով – կովի), և այլն:

Կինի – կինուն (գինի – գինու), մաշտ – մաշտուն (մարդ – մարդու), ծի – ծիուն (ձի – ձիու), և այլն:

Օղվի – օղվրնուն (ոտքեր – ոտքերի), խօզեր – խոզերուն (խոզեր – խոզերի), օրեր – օրերուն (օրեր – օրերի), և այլն:

«Ու» հոլովումը

Ընդգրկում է իր մեջ գրական հայերենի «ի» և «ան» հոլովումներին պատկանող բառերի մի մասը.

Աձ – աձուն (այծ – այծի), կալ – կալուն (գալ – գալի), լեր լորուն (լոր – լորի), և այլն:

Թեռ – թռռուն (թռռ – թռռան), եզ – եզուն (եզ – եզան), կարուն – կայնուն (գարուն – գարնան), և այլն:

«ՕԸ» հոլովումը

իր մեջ ընդգրկում է գրական հայերենի «ու» հոլովմանը պատկանող բառերի մի մասը.

Դոնձրնի – դոնձրնեծը (տանձ – տանձենու), ընգզրնի – ընգզրնեծը (ընկույզենի – ընկույզենու), թըզրնի – փըզրնեծը (թզենի – թզենու), և այլն:

«ԵՃ» հոլովումը

իր մեջ պարունակում է գրական հայերենի «ոջ» հոլովման բառերը.

Ընգեր – ընգերեճ (ենկեր – ընկերոջ), գընիգ – գընեճ (կին – կնոջ), քուր – քուրեճ (քույր – քրոջ), դալ – դալեճ (տալ – տալոջ), ներ – ներեճ (ներ – ներոջ), դակըր – դակըրեճ (տագր – տագրոջ), և այլն:

«ՎՈՆ» հոլովումը

Ընդգրկում է գրական հայերենի «վա» հոլովման բառերը.

Օր – օրվուն (օր – օրվա), դարի – դարվուն (տարի – տարվա), օմիս – օմսվուն (ամիս – ամսվա), կիշեր – կիշերվուն (գիշեր – գիշերվա), էրեզ ո էրեզվուն (երեկ – երեկվա), և այլն:

«Օ» հոլովումը

ընդգրկում է գրական հայերենի «ց» հոլովման բառերը.

Միրեկը – միրեծը (մերոնք – մերոնց), ծիրեկը – ծիրեծը (ձերոնք – ձերոնց), ըներ – ընեծը (ձերոնք – ձերոնց), բեդոեսծիկ – բեդոեսծեծ (պետրոսենք – պետրոսենց), և այլն:

ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒՆՎՈՒՄԸ

Պոնտահայերեն բարբառի Ջենիգի ենթաբարբառը, ինչպես և գրական հայերենը, ունի յոթ հոլով: Գոյական անունները, ըստ հոլովների, պատասխանում են հետևյալ հարցերին.

Ուղղական հոլով. Վեվ, ինճ(ը), ինճերը (ուս, ինչ(ը)):

Մեռական հոլով. Վում, ինճի, ինճերու (ուս, ինչի):

Տրական հոլով. Վում, ինճին, ինճերուն (ուս, ինչին):

Հայցական հոլով. Վում, ինճը, ինճերը, (ուս, ինչը):

Բացառական հոլով. Վուստմըն, ինճըն (ումից, ինչից):

Գործիական հոլով. Վուստմով, ինճով, ինճոն (ումով,

ինչով, ինչպես):

Ներգոյական հոլով. Ինճին, ինճին նեսը (ինչում):

Գոյական անունների վերջավորությունը հոլովներում կախված է նրանց եզակի թվի անորոշ ձևի վերջնատառից, անվան կրողի տեսակից և վանկերի քանակից:

Ա, ա, ու ձայնավորներով վերջացող գոյական անունները ստանում են հետևյալ վերջավորությունները.

Ուղղական հոլովի ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թիվը

ստանում է որոշող «ն» հոդը: Ընդ որում, նշված

ձայնավորներին հոգնակիում փոխարինում է «ը»

ձայնավորը:

Մեռական հոլովի եզակի թիվը ստանում է «ին» վերջավորութ-

յունը, իսկ հոգնակին՝ «նուն»:

Տրական հոլովում համապատասխանաբար «ին» և «նուն»:

Հայցական հոլովում «ա» և «ա» վերջնատառ ունեցողները

ստանում են եզակիում «ն», իսկ հոգնակիում՝ «ին»: «Ու» վերջնատառ ունեցողները համապատասխանաբար «ին» և «ուն»:

«Ի» ձայնավորով վերջավորվող գոյական անունների ուղղական հոլովի եզակի թիվը ստանում է «ն», իսկ հոգնակին՝ «ը» որոշող հոդերը, բացառությամբ «կեղածիկ» (գյուղացիներ), «հայաստանձիկ» (հայաստանցիներ), և նման այլ բառերի, որոնք որոշող հոդ չեն ստանում:

Մեռական հոլովում վերոհիշյալ գոյականները ստանում են «ուն» վերջավորությունը, բացառությամբ ծառատեսակների անունների, որոնք ստանում են «ը» վերջավորությունը, իսկ հոգնակիում՝ «նուն», բացառությամբ բնակության տեղիանուն հանդիսացող գոյական անունների, որոնք ստանում են «եծ» վերջավորությունը:

Տրական հոլովում «ի» ձայնավորով վերջավորվող գոյական անունները եզակի թվում ստանում են «ը», իսկ հոգնակիում՝ «ուն» վերջավորությունները, բացառությամբ «կեղածի» (գյուղացի), «դեղածի» (տեղացի), և նման այլ այլ բառերի, որոնք հոգնակիում ստանում են «եծ» վերջավորությունը:

Հայցական հոլովի եզակի թիվը ստանում է «ուն» վերջավորությունը, եթե անվան կրողը շնչավոր է և «ին» եթե անշունչ է:

Հոգնակի թվում շնչավորների անունները ստանում են «եծ» կամ «ուն», իսկ անշունչ առարկաների անունները՝ «ը», վերջավորությունները:

Բացառական հոլովում, ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվի բոլոր գոյական անունները ստանում են միեւնույն «ըն» վերջավորությունը:

Գործիական հոլովում նույնպես բոլոր գոյական անունները, ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվում, ստանում են միեւնույն «ով» վերջավորությունը:

Ներգոյական հոլովում «ինձի՞ն (ներք)» (ինչո՞ւն) հարցին պատասխանող գոյական անունները եզակի թվում ստանում են «ին» կամ «-ին (ներք)», իսկ հոգնակիում՝ «ուն», վերջավորությունները:

Բաղաձայն վերջնատառ ունեցող բոլոր գոյական անունները ստանում են.

- ուղղական հոլովում «ը» որոշող հոդը, ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվերում,
- սեռական հոլովում համապատասխանաբար «ին» և «ուն»,

- տրական հոլովում՝ «ին» կամ «ը» և «ուն»,
- հայցական հոլովում միավանկ գոյական անունները եզակի թվում՝ «ը» կամ «ին», իսկ հոգնակիում՝ «ուն»: Բազմավանկ գոյական անունները՝ «ին» կամ «ուն»:

Օրինակներ.

Ուղղական հոլով՝ պատասխանում է. Վեյ, ինձ(ը) – ով, ինչ(ը)

հարցերին:

«ին» հոլովում.

Տրբոռծին *աշագետտ* գա: (Դպրոցում աշակերտ կա):

Գովը *խեղ* գուղաւ: (Կովը *խոտ է ուտում*):

«ուն» հոլովում.

Դոնը *մաշտ* գա: (Տանը մարդ կա):

Կեղին *կեղածի* գինագու: (Գյուղում գյուղացի է ապրում):

«ն» հոլովում:

Գաղուն *մուգ* պըռնեծ: (Կատուն մուկ բռնեց):

Ձովուն *ծուգ* գըլլի: (Օովում ձուկ է լինում):

«եծ» հոլովում.

Բախձին *դոնձընի* գա: (Այգում տանձենի կա):

Հայատին *թըզընի* գա: (Բակում թզենի կա):

«եձ» հոլովում.

Ախապըրը *քուր* ունի: (Եղբայրը քույր ունի):

Հայսը կեսուր ունի: (Հարսը սկեսուր ունի):

«վոն» հոլովում.

Շապատը օխտը *օր* ունի: «Շաբաթը յոթ օր ունի):

Դարի դասերգու *օմիս* ունի: (Տարին տասներկու ամիս ունի):

Մեռական հոլով՝ վում, ինձի (ում, ինչի):

Աշագետտի (աշակերդի), խողի (խոտի):

Մաշտու (մարդու), կեղածու (գյուղացու):

Մըզոն (մկան), ծըզոն (ձկան):

Դոնձընեծ (տանձենու), թըզընեծ (թզենու):

Քուրեձ (քրոջ), կեսուրեձ (սկեսրոջ):

Օրվոն (օրվա), օմասվոն (ամսվա):

Տրական հոլով՝ վում, ինձին (ում, ինչին):

Աշագեոտին (աշակերդին), խողին
 (խոտին):
 Մաշտուն (մարդուն), կեղածուն
 (գյուղացուն):
 Մըզոնը (մկանը), ծըզոնը (ձկանը):
 Դոնձընեծը (տանձենուն),
 թըզընեծը (թզենուն):
 Քուրեճը (քրոջը), կեսուրեճը
 (սկեսրոջը):
 Օրվոնը (օրվա), օմսվոնը (ամսվա):
 Հայցական հոլով՝ Վում, ինձը (ում, ինչը):
 Աշագեոտի (աշակերդի), խեղը
 (խոտը):
 Մաշտու (մարդու), կեղածու
 (գյուղացու):
 Մուզը (մուկը), ծուզը (ձուկը):
 Դոնձընին (տանձենին), թըզընին
 (թզենին):
 Քուրեճը (քրոջը), կեսուրեճը
 (սկեսրոջը):
 Օրը (օրը), օմիսը (անիսը):
 Բացառական հոլով՝ վուստմըն, ինձըն (ումից,
 ինչից):
 Աշագեոտըն (աշակերդից), խողըն
 (խոտից):
 Մաշտվըն (մարդուց), կեղածմըն
 (գյուղացուց):
 Մուզըն (մկից), ծուզըն (ձկից):
 Դոնձընեծըն (տանձենուց),
 թըզընեծըն (թզենուց):
 Քուրեճըն (քրոջից), կեսուրեճըն
 (սկեսուրից):
 Օրըն (օրից), օմսըն (անսից):
 Գործիական հոլով՝ վուստմով, ինձով (ումով,
 ինչով):
 Աշագեոտով (աշակերդով), խողով
 (խոտով):
 Մաշտ(վ)ով (մարդով), կեղած(ի)ով
 (գյուծացով):
 Մըզով (մկով), ծըզով (ձկով):
 Դոնձընեծով (տանձենով),
 թըզընեծով (թզենով):
 Քուրեճ(մ)ով (քրոջով),
 կեսուրեճ(մ)ով (սկեսրոջով):
 Օրով (օրով), օմսով (ամսով):
 Ներգոյական հոլով՝ ինձին (ները), ինձուն
 (ները), - (ինչում,
 ինչի ներսը):
 Մեճն Հ. Աճառյանը, երեւի նյութի
 պակասության պատճառով, իր «Քննություն

համշենի բարբառի» գրքում (էջ 69) գրում է, որ
 համշենի բարբառում «պակասում է
 ներգոյական հոլովը», սակայն դա այդպես չէ:
 Եթե գրական հայերենում ինչպես հարցը,
 այնպես էլ պատասխանը ունեն նույն «ում»
 վերջավորությունը, ապա ջենիգի
 ենթաբարբառում «ին» կամ «ուն»:
Չովուն շաղ ծուգ գա: (Շովում շատ
 ձուկ կա):
 Ջիջուն *խողուն* գըլլի: (Ճիճուն
հողում է լինում):
Մարին փաղը շաղ *ա*: (Մետառում
 փայտը շատ է):
 Այճը *պուզին* քուն գըլլի: (Արջը
 քնում է որջում):
 Գովը գաբինգու *կումին*: (Կովին
 կապում են գումում):
 Հայսը հայսի *օղին* բարգիգու:
 (Հարսը պատկում է
 հարսի սենյակում):
 Ուղեիկը *մառնին* բահինգու:
 (Ուտեստը պահում են
 մառանում):

ԱՄՍԿԱՆ ԱՆՈՒՆ

Ջենիգի ենթաբարբառի ածական անունները
 պատասխանում են. ի՞նձոյ (ինչպիսի՞), ի՞նձ
 դեսագ (ինչպիսի՞, ի՞նչ տեսակ), վեյ դեսագ
 (որպիսի, ո՞ր տեսակ) և վե՛ր (ո՞ր) հարցերին:
 Ջենիգի ենթաբարբառում, ինչպես և գրական
 հայերենում, ածական անունները ցույց են
 տալիս.
 ա) առարկայի որակը. աղղեղ (կեղտոտ),
 էրզըն (երկար), մեճ (մեծ), տեղին (դեղին),
 ջարբիզ (ճարպիկ), լավ (լավ), և այլն:
 բ) առարկայի ինչ նյութից լինելը. քար*ա*
 (քարե), էրզրո*ա* (երկաթե), պոմբագ*ա*
 (բամբակե), հըրեղեն, և այլն:
 գ) ինչի կամ ում է վերաբերում առարկան.
 սարի (անտառի), այդի (արտի), գովու (կովի),
 մաշտու (մարդու), և այլն:
 Ջենիգի ենթաբարբառի ածականները
 նախադասության մեջ սովորաբար գործ են
 անվում որոես ենթակայի և ստորոցյալի
 լրացում՝ որոշիչ, պարագա. Լավ պոնողը լավ
 բիդի աբոի (լավ աղիսատողը՝ պիտի լավ ապրի):
 Օժանդակ բայի հետ ածականները դառնում
 են ստորոցյալ. Աստարի հավըն լավ *ա*: (Այս
 տարի եղանակը լավ է):
 Ածականը չի հոլովվում, սակայն
 գոյականաբար օգտագործվելիս՝
 օգտագործվում է ինչպես գոյականը:

Օրինակ. Մեծ ձառը շաղ ձաղգեծավ, բիջիգր՝ քիճ, ամա բիջիգ ձառը՝ ընդի շաղ պերավ: (Մեծ ձառը առատ ծաղկեց, փոքրը քիչ, սակայն փոքրը մեծից ավելի պտուղ տվեց):

Ածականի տեսակները. Որակական և հարաբերական՝ ինչպես գրական հայերենում:

Որակական ածականները ցույց են տալիս առարկայի ինչպիսի լինելը՝ համեմատելի հատկությունը:

Օրինակ. մեծ – բիջիգ (մեծ – փոքր), նեղ – լըն (նեղ – լայն), պայսը – ցածը (բարձր – ցածր), էրզըն – գայջ (երկար – կարճ), ըմրնապայսը – ըմրնացածը (ամենաբարձր – ամենացածր), և այլն:

Հարաբերական ածականները ցույց են տալիս մի առարկայի ոչ համեմատելի հատկությունը՝ մյուսի համեմատ, ինչից լինելը, ում կամ ինչին վերաբերելը կամ պատկանելը, ում կամ ինչին հատուկ լինելը:

Օրինակ. սյլի հավա (լեռնային կլիմա), փսղ տուռ (փայտե դուռ), պըշտ կուրբա (բրդյա գուլպա), և այլն:

Ցանկացած որակական ածանցից կարելի է կազմել գերադրական աստիճան «ըմրնա» (ամենա) նախածանցով:

Գրական հայերենի «գույն» վերջածանցը, որով կազմվում են գերադրական աստիճաններ Ջենիգի ենթաբարբառում չի գործածվում:

Ածականի համեմատության աստիճանները.

Դրական աստիճան, երբ ածականը ցույց է տալիս առարկայի հատկությունը, առանց համեմատելու մի այլ առարկայի հետ:

Օրինակ. էրզըն (երկար), գարմիր (կարմիր), պայսը (բարձր), խելոկ (խելոք), և այլն:

Համեմատական աստիճան, երբ համեմատվում է մեկ առարկայի հատկությունը՝ մեկ ուրիշի հետ: Կազմվում է դրական աստիճանից, որին ավելացվում է «ավելի», «ալ ավելի» (էլ ավելի), «շաղ» (շատ), «քիճ» (քիչ), և նման այլ բառեր:

Գերադրական աստիճան, երբ ածականը ցույց է տալիս առարկայի անգերազանցելի հատկությունը: Կազմվում է միայն «ըմրն» (ամեն) բառը դրական աստիճանի վրա սկզբից ավելացնելով. Լավ – ըմրնավ (ամենավալ), փիս – ըմրնափիս (վատ – ամենավատ), էրզըն – ըմրնաէրզըն (երկար – ամենաերկար), և այլն:

ԱՕՄԿԱՆԱԿԵՐՏ ՎԵՐՁԱՕՄԱՆՑՆԵՐ

«-ագոն» (-ագան), համապատասխանում է գրական հայերենի «-ական» վերջածանցին՝ վերաբերության և պատկանելիության նշանակությամբ.

Ախպարագոն, (-ագան) – եղբայրական, դրնագոն, (-ագան) – տնական, աշագեռագոն, (-ագան) – աշակերտական, և այլն:

«-ա» վերջածանցը համապատասխանում է գրական հայերենի «-ե» և «-յա» վերջածանցներին ու նույնպես ցույց է տալիս նյութը, որից ստեղծված կամ առաջացած է առարկան. պոմբագա (բամբակե), թրդտա (թղթե), փաղա (փայտյա), և այլն:

«-եղ» վերջածանցը համապատասխանում է գրականի «-ոտ» վերջածանցին և ինչպես գրականում ցույց է տալիս ուժեղ արտահայտող որակ. Մազեղ (մագոտ), քենեղ (քինոտ), մըրեղ (մրոտ), եղեղ (յուղոտ), և այլն:

«ընի» վերջածանցը համապատասխանում է գրականի «-ենի» վերջածանցին՝ միայն ծառերի տեսակի նշանակությամբ. Դոնձընի (տանձենի), թըզընի (թզենի), և այլն:

«-ի» վերջածանցը, առաջին հայացքից կարող է թվալ հայցական հոլովի վերջավորություն, սակայն համապատասխանում է գրականի վերաբերության կամ որպիսության ծագում ցուցնող «-ային» վերջածանցին. Սարի (անտառային), դոնի (տնային), ձովի (ծովային), և այլն:

ԱՕՄԿԱՆԱԿԵՐՏ Ժխտական նախածանցներ

Պոնտահայերեն բարբառի Ջենիգի ենթաբարբառում գործածական է միայն մեկ ածականակերտ ժխտական նախածանց «-ոն», որը մասնակիորեն համապատասխանում է գրական հայերենի, «չունեցող» նշանակությամբ, ժխտական «-ան» նախածանցին. Օնդեր (անտեր), օնհոմ (անհամ), օնկուն (անգույն), օնլի (անալի), օնդուն (անտուն), և այլն:

ԱՕՄԿԱՆԱԿԵՐՏ Ժխտական վերջածանցներ

Ջենիգի ենթաբարբառը ունի միայն մեկ ածականակերտ վերջածանց՝ «սույզ», որի «յ» բաղաձայնը, բառակազմության ընթացքում, սղվում է, ինչպես և այլ բառերում, և ստանում է «սուզ» ձևը՝ սուզված, անհետացած, չլինել, չունենալ, չթվել, կորչել իմաստներով: Այն պետք չէ շփոտել թուրքական «սըզ» ժխտական վերջածանցի հետ, քանի որ նույն հայկական «սուզ» արմատից են գոյացել նաև հայկական «սուզել» և «սուզվել» բայերը:

Օրինակ. օնգոջուզ (անականջ), առուզ (անամոթ), օնունսուզ (անանուն), ազոռասուզ (անատամ), արեւսուզ (անարեւ), և այլն:

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ջենիգի ենթաբարբառի թվականը ցույց է տալիս որևէ թիվ, կարգ կամ բաշխում:

Նախադասության մեջ սովորաբար գործ է անվում որպես լրացում՝ որոշիչ:

Օժանդակ բայի հետ կազմում է ստորոգյալ:

Կարող է գործածվել գոյականաբար և ունենալ գոյականի պաշտոն՝ ենթակա, խնդիր, և այլն:

Քանակական թվականները ցույց են տալիս առարկաների քանակ. Մեզ (մեկ), էրգուս (երկու), իրեկ (երեք), և այլն:

Դասական թվականները ցույց են տալիս առարկաների կարգ. առաձին (առաջին), եզրոտ (երկրորդ), և այլն:

Բացի «առաձին» (առաջին) բառի, դասական թվականների անանցներն են. էրգուս (երկու), իրեկ (երեք) և չեյս (չորս) բառերի համար «-րոտ», իսկ բոլոր մնացածների՝ «-երոտ»:

Բաշխական թվականները ցույց են տալիս առարկաների բաշխումն ըստ հավասար քանակի.

մեզ-մեզ (մեկ-մեկ), մեզագոն (մեկական),

էրգուս-էրգուս (երկու-երկու), էրգուսկոն (երկուական), և այլն:

Պարզ թվականներն են մեկից մինչև տասը (մեզ, էրգուս, իրեկ, չեյս, հինգ, վեժ, յոտը (օխտը), ուտը, ինը, դասը), տասնավորները (սոն, էոտոն, քառսոն, հիսոն, վաժոն, յոտնասոն (օխտնասոն), ուտժոն, ընըսոն, հարուր), հազար, միլիոն, միլիառը բառերը:

Բարդ թվականներն են, բացի տասնավորներից, տասնմեկից մինչև հարյուրը:

Բաղադրյալ թվականներն են մնացած բոլորը՝ բացառությամբ վերը նշվածների:

Թվականները գոյականների հետ գործածվելիս չեն հոլովվում, իսկ առանձին գոյականաբար գործածվելիս՝ հոլովվում են, ստանալով գոյականների հոլովական վերջավորությունները:

ԴԵՐԱՆՈՒՆԵՐ

Պոնտահայերեն բարբառի Ջենիգի ենթաբարբառում նախադասության մեջ դերանունները կարող են փոխարինել գոյականին, անականին, թվականին, մակբային, քանի որ ցույց են տալիս առարկա, որպիսություն, քանակ և գործողության հանգամանքները ընդհանուր առումով:

Իրենց նշանակությամբ դերանունները բաժանվում են ութ տեսակի.

Անձնական՝ ես, տուն, ըն (ես, դու, նա),

մեկ, տունկ, ըներ (մենք, դուք, նրանք),

միրեկը, ծիրեկը, ըներ (մենք, դուք, նրանք):

Ցուցական՝ իսա (սա), սա, ըն (այս, սույն, այդ, այն, նա),

Շիի սա (էլի այս, նույն, միեւնույն),

սաի ըն (էլի այն, նույն, միեւնույն),

Փոխադարձ՝ իրար, մեզըմեզին (մեկմեկու):

Հարցական՝ վեվ (ո՞վ), վեր (ո՞ր), քոնի (քանի, որքան), ինձոն, ինձպես (ինչպիսի, որպիսի), քոնիերոտ (քանիերորդ), ներ (ու՞ր), վոյդեխ (որտեղ), եպ (ե՞րբ):

Հարաբերական՝ նույն դերանուններն են, ինչ որ հարցականները, սակայն առանց հարցական իմաստի:

Որոշյալ՝ ըմըն (ամեն), ըմընը (ամենը), ըմընկը (ամենքը), ալայկը (բոլորը), ալայ (բոլոր, ամբողջ), ըմընը (ամենը), ըմըն ինձ (ամեն ինչ), ըմըն մեզը (ամեն ոք), և այլն:

Անորոշ՝ ինձոր (ինչ որ), մեզը (ոմն, մեկը), սաինձ (այսինչ), ընինձ (այն ինչ), ուրիշ (ուրիշ, այլ), վերմը (վումանք), և այլն:

Ժխտական՝ իվեկ (ոչ ոք), ինձիզ (ոչինչ), հիժ մեզը (ոչ մեկը), հիժ (ոչ մի), և այլն:

Դերանունները ոգտագործվում են ինչպես գրականում:

ԲԱՅ

Ջենիգի ենթաբարբառում, ինչպես և գրականում, բայը ցույց է տալիս գործողություն կամ եղելություն, այսինքն ի՞նչ է անում առարկան, կամ ի՞նչ է նրա հետ կատարվում:

Բայերը պատասխանում են «ինձ ընուշ» (ինչ անել) կամ «ինձ ըլլուշ» (ինչ լինել) հարցերին: Ինչպես և գրական հայերենում, առաջին հարցի պատասխանը ցույց է տալիս գործողություն, իսկ երկրորդի պատասխանը՝ եղելություն:

Բայի դիմավոր ձևերը նախադասության մեջ լինում են ստորոգյալ, իսկ անդեմ ձևերը՝ այլ անդամներ: Ստորոգյալ դառնալու համար բայի փոփոխությունը կատարվում է կամ վերջավորությունների միջոցով, կամ դերբայով և ոժանդակ բայի ձևերով:

Օրինակ. Ես խընձեր քաղիմ գու, տուն քաղիս գու, ըն քաղս գու:

Ես խնձոր եմ քաղում, դու քաղում ես, նա քաղում է:

ԴԵՐԲԱՅՆԵՐ՝ ԲԱՅԻ ԱՆՊԵՄ ԶԵՆԵՐ

Ջենիգի ենթաբարբառի դերբայները, ինչպես և գրական հայերենում, ցույց են տալիս գործելու, լինելու, ինչպես նաև գործողության ժամանակի ընդհանուր գաղափար:

Անորոշ դերբայները ունեն միայն մեկ՝ «ուշ», դերբայական վերջավորություն, սակայն նրանք բաժանվում են երկու խմբի և ենթարկվում են «ե» կամ «ա» խոնարհման:

Անորոշ դերբայը հոլովվում է միայն եզակի թվով և օգտագործվում է որպես գոյական:

Անկատար դերբայը ունի միայն երկրորդական ձևեր. «-ելս» (-ելիս) և «-ալս» (-ալիս) վերջավորություններով, որոնցից առաջինը կազմվում է «ե» խոնարհմանը, իսկ երկրորդը՝ «ա» խոնարհման դերբայներից:

Օրինակ. Կրբուշ – կրբելս (գրելիս), գաշտուշ – գաշտալս (կարդալիս), և այլն:

Հած ուղելս չիմ խոսիլ: (Հաց ուտելիս չեմ խոսում):

Ապառնի դերբայը կազմվում է «ող» վերջավորությամբ, որը փոխարինում է անորոշ «ուշ», վերջավորությանը, անկախ խոնարհումից:

Օրինակ. կրբուշ – կրբող (գրող), գաշտուշ – գաշտող (կարդացող), և այլն:

Ապառնի դերբայը ստորոգյալ է կազմում միայն օժանդակ բայով. Կրբող իմ (ըմ) – գրելու եմ, գաշտող իմ (ըմ) – կարդալու եմ, էշտող իմ (ըմ) – գնալու եմ, և այլն:

Վաղակատար դերբայը «ե» խոնարհման բայերի համար ունի «-աձ», իսկ «ա» խոնարհման բայերի համար «-ծաձ» վերջավորությունները, որոնք փոխարինում են անորոշ դերբայի «ուշ» վերջավորությանը:

Օրինակ. կրբուշ – կրբաձ ունիմ (գրել եմ), գաշտուշ – գաշտըձաձ իմ (կարդացել եմ), և այլն:

Հարակատար դերբայը կազմվում է ինչպես վաղակատար դերբայը, և ունի նույն «աձ» և «ծաձ» վերջավորությունները, սակայն նրանից տարբերվում է օժանդակ բայով:

Օրինակ. վաղակատար՝ Աղ կիրկը գաշտըձաձ իմ:

(Այդ գիրքը կարդացել եմ):

հարակատար՝ Գաշտըձաձ կիրկը չին նեղիլ:

Կարդացած գիրքը չեմ քցում:

Ջենիգի ենթաբարբառի դերբայը, ինչպես և գրականի, կարող է լինել նաև նախադասության առանձին անդամ.

Հասած խրնձերը՝ ձառըն ցած ընգավ:

Հասած խնձորը՝ ծառից ցած ընկավ:

Ենթակայական դերբայը ունի «-ող» և «-ծող» վերջավորությունները և, ինչպես գրական հայերենում, ցույց է տալիս գործողություն և կատարող:

Օրինակ. լըսուշ – լըսող (լսող), գաշտուշ – գաշտըձող, և այլն:

Լըսողը՝ շաղ պոն գիմընա: (Լսողը՝ շատ բան է իմանում):

Գաշտըձողը՝ շաղ կիդնագու: (Կարդացողը՝ շատ կիմանա):

Օժանդակ բայի գուգորդմամբ, կազմում է ստորոգյալ.

Կիրկը գաշտող իմ (ըմ): (Գիրքը պիտի կարդամ):

Ժխտական դերբայը կազմվում է. «ե» խոնարհման անորոշ դերբայների հիմքից՝ «-իլ» վերջավորությամբ, «ա» խոնարհման անորոշ դերբայների հիմքից՝ «-ալ» վերջավորությամբ, և «ու» խմբի անկանոն դերբայի հիմքից՝ «-ուլ» վերջավորությամբ:

Օրինակ. չիմ լըսիլ (չեմ լսում), չիմ էշտալ (չեմ գնում), չիմ դեսնուլ (չեմ տեսնում), և այլն:

ԲԱՅԻ ԴԻՄԱՎՈՐ ԵՎ ԵՂԱՆԱԿԱՅԱՅԻՆ ՁԵՎԵՐ

Ջենիգի ենթաբարբառի բայի դիմավոր ձևերը, ինչպես և գրական հայերենում, ցույց են տալիս ենթակայի գործողություն և ունեն դեմք, թիվ, ժամանակ և եղանակ: Ունեն երեք դեմք և երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Միշտ լինում են ստորոգյալ:

Պարզ բայերի դեմքն ու թիվը արտահայտվում են վերջավորություններով, իսկ բաղադրյալ ձևերը կազմվում են դերբայով և օժանդակ բայով, որը և ցույց է տալիս բայի դեմքն ու թիվը: Ունի երեք հիմնական ժամանակ՝ ներկա, անցյալ և ապառնի, սակայն նրանց վրա ավելանում են բավականաչափ այլ կարգի ժամանակներ, որոնց կանդրադառնանք հետագայում:

ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԸ

Ջենիգի ենթաբարբառի բայն ունի երկու հիմնական խոնարհում: Գրական հայերենի «ե» և «ա» խոնարհումներին պատկանող բայերին համապատասխանող Ջենիգի ենթաբարբառի բայերը, կազմում են երկու խումբ, բացառությամբ. «առնուշ» (առնել), «մըղնուշ» (մտնել), «դեսնուշ» (տեսնել), «կըղնուշ» (գտնել), և «թողուշ» (թողնել) բայերի, որոնք կազմում են ինքնուրույն խումբ և խոնարհվում են «ու» լծորդությամբ, ուստի դիտվում են որպես առանձին խոնարհում, սակայն, հաշվի առնելով նրանց քանակը՝ ընդամենը հինք բայ, ճիշտ կլինե՞ր դրանք դասել անկանոն բայերի շարքում:

Խոնարհման պատկանելիությունը որոշելու համար պետք է վերցնել ջենիգի ենթաբարբառի գրական ձևը կամ «մի» արգելական մասնիկի օգնությամբ, որի ազդեցության տակ «ե»

խոնարհման անորոշ բայի «ուշ» վերջավորությանը փոխարինում է «իլ»-ը, «ա» խոնարհման բայերում՝ «ալ»-ը, «ու» խմբի բայերը ստանում են «ուլ» վերջավորությունը:

Օրինակ. խոսուշ – մի խոսիլ (մի խոսի), գաշտուշ – մի գաշտալ (մի կարդա), առնուշ – մի առնուլ (մի վերցնի), և այլն:

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ջենիգի ենթաբարբառի բայի դիմավոր՝ եղանակային, ձեւերն ունեն, ինչպես և գրականը, հինգ եղանակ. Մահմանական, հրամայական, ըղձական, պայմանական և հարկադրական:

1) Մահմանական եղանակը, ջենիգի ենթաբարբառում, ունի ինն ժամանակ՝ ներկա անկատար, անցյալի անկատար, ապառնի, անցյալի ապառնի, վաղակատար, անցյալի վաղակատար, հարակատար, անցյալի հարակատար և անցյալ կատարյալ, որոնցից վեցը կազմվում են օժանդակ և լրացուցիչ բայերի օգնությամբ՝ բաղադրյալ են, իսկ երեքում օժանդակ բայերը փոխարինելով անորոշի «ուշ» վերջավորությանը, իրենք են վերածվում վերջավորությունների ցույց տալով դեմք և թիվ:

Յուրաքանչյուր խոնարհում ունի իր ոժանդակ բայերը և վերջավորությունները, սակայն նրանք, որոշ դեփքերում, համընկնում են:

«Ե» խոնարհման վաղակատար, անցյալի վաղակատար, հարակատար և անցյալի հարակատար ժամանակները կազմվում են «օննուշ» (ունենալ) լրացուցիչ բայի օգնությամբ, որը տեղադրվում է անփոփոխ դերբայից հետո և խոնարհվում է՝ ցույց տալով դեմք ու թիվ: Լրացուցիչ բայի «օննուշ» անորոշ ձեւը խիստ տարբերվում է նրա որոշ դիմավոր ձեւերից: Խոնարհումը կատարվում է «ե» խոնարհման կանոններով:

Պարզ բայերի վերջավորությունների ու բաղադրյալ բայերի օժանդակ բայերի ձեւերը՝ բազմազան են, սակայն ինչպես գրական հայերենի կանոնավոր օժանդակ բայը, ցույց են տալիս դեմք, թիվ և դերբայով արտահայտված գործողության կատարումը ներկայի կամ մի անցյալ ժամանակի հարաբերությամբ:

Օժանդակ բայի «իմ, իս, ա, ինկ, էկ, ին» հիմնական ձեւերը միայնակ կազմում են ատորոգյալներ՝ էական բայեր:

Ջենիգի ենթաբարբառում օժանդակ բայը պարտադիր դրվում է դերբայից հետո՝ դրական խոնարհման ժամանակ, իսկ ժտական խոնարհման ժամանակ, նայած տրամաբանական շեշտի, լինում է դերբայից ինչպես առաջ, այնպես էլ հետո:

1. Ներկա անկատար ժամանակ:

«ե» խոնարհում: Լըսուշ (լսել):

Եզակի	Շոգնակի
Լըսիմ գու, լըսիս գու (կու), լըս <u>ա</u> գու:	Լըսինկ գու (կու), լըսեկ գու (կու), լըսին գու:
Ավլուշ (ավլել). Գավլիմ, գավլիս, գավլ <u>ա</u> :	Գավլինկ, գավլեկ, գավլին:

«ա» խոնարհում: Գաշտուշ (կարդալ):

Գաշտոմ գու, գաշտաս գու (կու) գաշտա գու,	գաշտոնկ գու (կու), գաշտ <u>ա</u> կ գու (կու), գաշտոն գու:
---	---

2. Անցյալ անկատար ժամանակ:

«ե» խոնարհում: Լըսուշ (լսել): Ավլուշ (ավլել):

Լըսեյ գու, -եյդ գու, -եր գու:	-այկ գու (կու), -եյկ գու (կու), - էյն գու:
գավլեյ, գավլեյդ, գավլեր:	գավլայկ, գավլեյկ, գավլեյն:

«ա» խոնարհում: Գաշտուշ (կարդալ): Ադուշ (աղալ):

Գաշտ <u>ա</u> յ գու, - <u>ա</u> յդ գու, - <u>ա</u> ր գու:	-այկ գու (կու), - <u>ա</u> յկ գու (կու), - <u>ա</u> յն գու:
Գադ <u>ա</u> յ, գադ <u>ա</u> յդ, գադ <u>ա</u> ր:	Գադայկ, գադ <u>ա</u> յկ, գադ <u>ա</u> յն:

3. Ապառնի ժամանակ:

«ե» խոնարհում: Լըսուշ (լսել): Ավլուշ (ավլել):

Լըսող իմ (ըմ), -իս (ըս), <u>ա</u> :	-ինկ (-ընկ), -եկ, -ին (ըն):
-------------------------------------	-----------------------------

«ա» խոնարհում: Գաշտուշ (կարդալ): Ադուշ (աղալ):

Գաշտող իմ (ըմ), իս, <u>ա</u> :	Գաշտող ինկ (ընկ), եկ, ին:
--------------------------------	---------------------------

4. Անցյալի ապառնի ժամանակ:

«ե» խոնարհում: Լըսուշ (լսել):

Լըսող էյ, էյդ, էր:	Լըսող այկ, էյկ, էյն:
--------------------	----------------------

«ա» խոնարհում: Գաշտուշ (կարդալ):

Գաշտող էյ, էյդ, էր:	Գաշտող այկ, էյկ, էյն:
---------------------	-----------------------

5. Վաղակատար ժամանակ:

«ե» խոնարհում: Լըսուշ (լսել):

Լըսած ունիմ, ունիս, ունի:	Լըսած ունինկ, ունեկ, ունին:
---------------------------	-----------------------------

«ա» խոնարհում: Գաշտուշ (կարդայ):

Գաշտրծած իմ, իս, <u>ա</u> :	Գաշտրծած ինկ, էկ, ին:
-----------------------------	-----------------------

6. Անցյալի վաղակատար ժամանակ:

«ե» խոնարհում: Լըսուշ (լսել):

Լըսած ունեյ, ունեյո,	Լըսած ունայկ, ունեյկ, ունեյն:
----------------------	-------------------------------

«ա» խոնարհում: Գաշտուշ (կարդայ):

Գաշտրծած էյ, էյո, էր:	Գաշտրծած այկ, էյկ, էյն:
-----------------------	-------------------------

7. Հարակատար ժամանակ:

«ե» խոնարհում: Լըսուշ (լսել):

Լըսած ունիմ, ունիս,	Լըսած ունինկ, ունեկ, ունին:
---------------------	-----------------------------

«ա» խոնարհում: Գաշտուշ (կարդայ):

Գաշտրծած իմ, իս, <u>ա</u> :	Գաշտրծած ինկ, էկ, ին:
-----------------------------	-----------------------

8. Անցյալի հարակատար ժամանակ:

«ե» խոնարհում: Լըսուշ (լսել):

Լըսած ունեյր, ունեյրո,	-ունայկը, ունեյկը, ունեյնը, ունեյնր:
------------------------	--------------------------------------

«ա» խոնարհում: Գաշտուշ (կարդայ):

Գաշտրծած էյր, էյրո, էր:	Գաշտրծած այկը, էյկը, էյնը:
-------------------------	----------------------------

Սահմանական եղանակի պարզ ժամանակը՝

9. Անցյալ կատարյալ ժամանակ:

«ե» խոնարհում: Լըսուշ (լսել):

Լըսեծի, լըսեծիր,	Լըսեծակ, լըսեծիկ, լըսեծ:
------------------	--------------------------

«ա» խոնարհում: Գաշտուշ (կարդայ):

Գաշտածի, գաշտածիր, գաշտած:	Գաշտրծակ, -ծիկ, -ծին:
----------------------------	-----------------------

2) Հրամայական եղանակ:

Լըսուշ (լսել). Լըսա՛: Լըսեծե՛կ:
 Ավլուշ (ավլել). Ավլա՛: Ավլեծե՛կ:
 Գաշտուշ (կարդայ). Գաշտա՛:

Գաշտրծե՛կ:

Աղուշ (աղայ): Աղա՛: Աղծե՛կ:

3) Ըղծական եղանակ:

ա) Ապառնի ժամանակ:

«ե» խոնարհում: Լըսուշ (լսել):

Լըսիմ, լըսիս, լըս <u>ա</u> :	Լըսինկ, լըսեկ, լըսին:
